



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ
ՀԻՒՍԽԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՍՏԵԱՆ ԹԵՍԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԸ
ՈՒՆԵՑՎԱԴ ԶԱՏԿԱԿԱՆ ՀԱՎԱՔՈՅՑ ՄԸ**

Տարիներու բարի աւանդութիւն է, որ Ս. Յարութեան տօնի վաղորդային, Արեւմտեան մեր թեմի Ազգային Առաջնորդարանի ընտանիքը ի մի խմբուի մեկ յարկի տակ ու զատկական շնորհաւորածներ փոխանակե մտերմիկ մթնոլորտի մեց:

Այս տարի եւս, զատկական հաւաքոյթ մը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 17 Ապրիլի կեսօրին, Սեռելոց յիշատակի օրուան հոգեհանգստեան արարողութիւններուն ետք: Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ յարկին տակ թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեն Արք. Սարտիրոսեանի շուրջ համախմբութցան հոգեւորականաց դասու, Կրօսական ժողովի, Ազգային Վարչութեան, Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինի եւ ծխական շրջաններու հոգաբարձութեանց ու տիկնանց միութեանց Ներկայացուցիչները, հիւրընկալութեամբ Տիկնանց Օժանդակ Մարմինին, որ պատրաստած էր սիրոյ սեղան մը:

Առաջնորդ Սրբազնին ու հոգեւորականաց դասու անդամներուն միացեալ աղօթքով ու Ս. Յարութեան տօնին նուիրուած շարականներու երգեցողութամբ տեղի ունեցաւ Ս. Զատկուան Տօրինեքի արարողութիւն: Ապա տեղի ունեցաւ հաւկթախաղ: Ճաշի պահուն, սրտի ու գևահատանքի խօսքեր արտասանեցին Գերա. Տ. Միւռոն Ծ. Վոր. Ազնիկեան, Արժ. Տ. Վիգեն Ա. Թինյ. Վասիլեան, Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տոքթ. Յակոր Տէր Մկրտիչեան, Ազգ. Վարչութեան անդամ Տիար Բեգլար Փիլաւճեան, Տ. Օ. Մարմինի Ներկայացուցիչ Տիկ. Յուրիկ Ապտուլեան, Ս. Նահատակաց Եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Տիար Լեւոն Վրապեան եւ ուրիշներ:

Յաւաքոյթի պաշտօնական բաժինին Եղբակակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազն Յայրը, որ գևահատանքով արտայայսութցաւ մեր Եկեղեցւոյ ու Ազգ. Առաջնորդարանի առաքելութեան նուիրեալ ծառայողներուն անձնիր աշխատանքը եւ մաղթեց, որ մեր ժողովուրդին կարիքներուն ի խնդիր գործը շարունակուի վերանորոգ կորովով ու յանձնառութեամբ:

WESTERN PRELACY EASTER GATHERING

It has been a long-standing tradition that on the day following Easter, the Western Prelacy family gathers to express Easter wishes to each other.

This year also, a gathering took place on Monday, April 17, following requiem services. Under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, members of clergy, Executive Council, Ladies Auxiliary Guild, and Board of Trustees gathered at the "Karapetian" Hall of St. Garabed Church for a reception organized by the Prelacy Ladies Guild.

The Prelate and members of clergy conducted the blessing of the tables with a joint prayer and the singing of hymns dedicated to Easter. During lunch, words of appreciation were articulated by Very Rev. Fr. Muron Aznikian, Archpriest Viken Vassilian, Executive Council Co-Chair Dr. Hagop Der Megerdichian, Executive Council member Mr. Peklar Pilavjian, Ladies Guild representative Mrs. Hourig Abdulian, and Holy Martyrs Board of Trustees Chairman Mr. Levon Arabian.

The Prelate, in his closing remarks, expressed gratitude to the devoted servants of our church and Prelacy, wishing them strength and ability to continue their mission with renewed vigor.